ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լերմոնտովո, (0322)68570, lermontovo.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
12 մայիսի 2021 թվականի N 15

ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ "Տեղական ինքնակառավարման մասին" օրենքի 18-րդ հոդվածի 31-րդ կետով, առաջնորդվելով "Կադաստրային հատակագծերում և քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման հրահանգը հաստատելու մասին" ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 01/06/2010 թ-ի թիվ 186-Ն հրամանով, ՀՀ վարչապետի 2001 թ-ի օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 10/05/2021 թ-ի թիվ 107 դրական եզրակացությունը, Լերմոնտովո համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Փոփոխել ՀՀ Լոռու մարզի Լերմոնտովո համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում առաջարկվող հողամասի նպատակային նշանակությունը՝ Լերմոնտովո համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.55756հա /կադաստրային ծածկագրեր՝ 06-043-0028-0001, 0003, 0004, 0005, 0006, 0039/ մակերեսով արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերից փոփոխել բնակավայրերի հողեր նպատակային նշանակության՝ հասարակական կառուցապատման հողեր գործառնական նշանակության:

2.Համայնքի ղեկավարին՝ կատարել վերը նշված հողամասի պետական գրանցման աշխատանքները:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱԴՈՎ ՎԻՏԱԼԻ
2. ԲՈԼՈՏԻՆ ԻՎԱՆ
3. ԿՈՐՈԼՅՈՎ ԱՆԴՐԵՅ
4. ԿՈՐՈԼՅՈՎ ՎԱՍԻԼԻ
5. ՇՈՒՏՈՎ ԱԼԵՔՍԵՅ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ**